

րում կազմակերպչի դեր են խաղում¹⁴։ Սգո երգերը պահպանում են իրենց ավանդական նկարագիրը։ Լինելով իմպրովիզացիոն՝ բովանդակության առումով, նրանք կառուցվածքի և ձևի առումով փոփոխության չեն ենթարկվել։ Սգո երգի հիմնական մոտիվը ննջեցյալի գովքն է, որը արվում է նույն խումբ-երգերում նույն լեզվա-արտահայտչական միջոցներով¹⁵։ Երիտասարդների, երեխաների, կանանց համար ասվող յուրաքանչյուր խումբ երգերը թելադրում են համապատասխան նույնատիպ մակերիներ, համեմատություններ և այլն։

Մեծահասակները դեռ հիշում են երաշտը և անձրևային հղանակները կանխելու նպատակով արվող ծեսը և ծեսի ժամանակ օգտագործվող «ճուխ» (գոգի)¹⁶ երգը։

Ճուխ-վախ՝ ճուլ չկա,
Խավիժ անիմ եղ չկա։
Ճուխն ընգավ ծովը
Մովան տյուս օնող չկա։
Քյանդիբ պերեբյ տյուս օնիբյ,

Չովան պերեբյ կցան տան։
Եղր պերեբյ վարսը բսիբյ,
Ճյուրք պերեբյ տափեն տիմիբյ։

1970—1973 թթ. դրառած բանահյուսական ստեղծագործությունների մեջ կան նաև խաղերգեր, չափածո հանդավորված հարց ու պատասխաններ, հանելուկներ, որոնք գործ են անվում գերազանցապես մանուկների ու պատանիների շրջանում։ Այս բանահյուսությունը, որին մանկական են անվանում, գեղես կենդանի է, բայց դժվար է ասել, թե կենսունակ է ասլադայի իմաստով։

Այսպիսով, 1970—1973 թթ. գրի առած նյութի վիճակը հնարավորություն է բնձնում ասելու, որ Լեռնային Ղարաբաղը բանահյուսական տեսակետից կրելով հանդերձ նոր, ժամանակակից կյանքի կնիքը, պահպանում է իր ավանդական ինքնատիպությունն ու տոհմիկ նկարագիրը։

Ա. ՂԱԶԻՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Ա. Ալպոյաճյանի «Տպագրության արվեստը և հայք» աշխատությունը)

Արևմտյան Հայաստանի գավառային հայկական տպարանների ու նրանց գործունեության մասին, որքան մեզ հայտնի է, տպագրված հատուկ ուսումնասիրություններ չկան։ Այդ բացը զգալիորեն լրացնում է անվանի պատմարան հանգուցյալ Արշակ Ալպոյաճյանի մի նախաձեռնությունը, որն ունի իր հետաքրքիր պատմությունը։

Դեռևս երիտասարդ, բայց արդեն հմուտ և ճանաչված պատմաբանը 1914 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ հայ հասարակական կյանքը Թուրքիայում, չնայած սկսված պատերազմին, դեռևս ընթանում էր քիչ թե՛ շատ սովորական հունով, նամակ-գրություններով դիմում է Թուրքիայի հայաբնակ գավառների ան-

վանի մտավորականներին, խնդրելով նյութեր ուղարկել իրեն՝ տեղերում հաստատված հայկական տպարանների, նրանց գործունեության, հրատարակած գրքերի ու պարբերականների վերաբերյալ։ Այդ նյութերը բարեբախտաբար ըստացվում են։

Հայկական տպարանների վերաբերյալ Ալպոյաճյանի հետաքրքրությունը միանգամայն հասկանալի է։ Հայ տպագրության պատմությունը երկար տարիներ եղել է նրա ուշադրության կենտրոնում։ 1912 թ. «Կոչնակի» երեք համարներում նա հրապարակում է «Չորսհարյուրամյակ հայկական տպագրության» հակիրճ ուսումնասիրությունը։ Հայ տպագրության մասին բավականին նյութեր կան նաև հետազայում լույս ընծայած նրա աշխատություններում։ Բայց այդ թեմայի վերաբերյալ Ալպոյաճյանի հիմնական գործը հանդիսանում է «Տպագրության արվեստը և հայք» ծավալուն անտիպ ուսումնասիրությունը։ Այդ աշխատությունը ձեռագիր վիճակում է, երկու օրինակից, որոնք պահվում են Երևանում, մեկը՝ Մատենադարանում, մյուսը՝ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ)։ Դրանք Երևան են հասել տարբեր ժամանակներում և տարբեր ու-

¹⁴ А. Газиян, Б. Сехбосян, О похоронных обрядах и причитаниях Нагорного Карабаха. Тезисы докладов всесоюзной научной сессии, посвященной итогам полевых археологических и этнографических исследований 1970 г., Тбилиси, 1971, էջ 126։

¹⁵ Ս. Վարդանյան, Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, էջ 90։

¹⁶ Նույն տեղում, էջ 88։

զինեցով: Մատենադարանում պահվող ձեռագիրը ստացվել է հանգուցյալ գիտնականի արխիվի հետ միասին: Այն գրված է Ալյույաճյանի ձեռքով, բաղկացած է 878 թերթից, բաժանված Ա—ԻԱ թվագրված զուխներով: Այդ զուխներից չկան Ժ-ն («Պոլսի տպարանների պատմությունը»), որ բարերախտարար պահպանվել է Գրականության և արվեստի թանգարանում պահվող ձեռագրում (ավելի քան 200 էջ), ԺԲ-ն, որ ամենայն հավանականությամբ պետք է ներկերված լինեի Թուրքիայի հայաբնակ գավառների տպարանների պատմությանը (Պոլսի և Զմյուռնիայի հայ տպարանների պատմությանը նվիրված Ժ ու ԺԱ պատրաստի զուխներից հետո) և ԺԷ ու ԺԹ զուխները, որոնք ըստ երևվելիքի ծրագրվել, բայց չեն գրվել:

Ալյույաճյանն իր այս ուսումնասիրությունը պատրաստել է 1912 թ. (առնվազն առաջին մասը), հայ գրերի գյուտի 1500-ամյակի և տպագրության 400-ամյա հոբելյանի կապակցությամբ: Ավելի ավարտուն և ըստ երևույթի խմբագրված վիճակի մեջ է, ինչպես ցույց է տալիս և ԳԱԹ-ի օրինակը, աշխատության առաջին կեսը: Հմուտ գիտնականը մեծ բարեխղճությամբ ուսումնասիրել և արժեքավորել է առաջին հայ տպագրիչների կատարած աշխատանքը, նրանց տեղն ու դերը հայ մշակույթի զարգացման գործում, տվել է Կ. Պոլսի ու Զմյուռնիայի հայկական բազմաթիվ տպարանների հիմնադրման ու գործունեության պատմությունը, տեղեկություններ հաղորդել նրանց հիմնադիրների, տպարանների հրատարակած գրքերի մասին, հանգամանորեն բնութագրելով և այն միջավայրը, որի պայմաններում գործել ու իրենց գոյությունն են պահպանել այդ տպարանները: Հատկապես շատ հետաքրքիր նյութեր կան հայկական պարբերականների, նրանց հրատարակիչների ու խմբագիրների մասին: Աշխատության երկրորդ կեսը բովանդակում է Պարսկաստանի, Հնդկաստանի, Ռուսաստանի, Կովկասի, Եգիպտոսի ու Ամերիկայի հայ տպարանների պատմությունը, ըստ որում վերջին զուխները (մասնավորապես Եգիպտոսի ու Ամերիկայի տպարաններին վերաբերող մասը) շարադրված են շատ կցկտուր և սեպագրության տպավորություն են թողնում:

Ինչ վերաբերում է Ալյույաճյանի ուսումնասիրության երկրորդ՝ Գրականության և արվեստի թանգարանում պահվող օրինակին, ապա դա ունի իր ուշագրավ պատմությունը: Ժամանակին (1912 թ.) հեղինակն այն ուղարկել է Խիֆիս,

«Արորի» խմբագրությանը, ըստ երևույթի վերջինիս պատվերով: Սակայն աշխատության տպագրությունը «Արորում» չի իրականացվել: ԳԱԹ-ում պահպանվել է «Արորի» խմբագիր Համբ. Առաքելյանի մի գրությունը, կցված Ա. Ալյույաճյանի աշխատությանը, որտեղ ասված է. «Համազգային մեծ հոբելյանի, այն է՝ Հայկական դրերի գյուտի 1500-ամյակի և Հայկական տպագրության 400-ամյակի միացյալ հոբելյանի առթիվ, «Արոր»-ի խմբագրությունը որոշել էր այս 1913 թ. ընթացքում տալ մի շարք ուսումնասիրություններ պատմական այդ մեծ ակտերի մասին: Սակայն մի քանի ձախող հանգամանքներ ստիպեցին մեզ այս տարի չհրատարակել «Արոր»-ը իրեն ամսյա հանդես: Այնուամենայնիվ մենք որոշեցինք լույս ընծայել այս տարի «Արոր»-ի երկու գիրք. Ա և Բ, առաջինը նվիրված Համազգային մեծ հոբելյանին, երկրորդը՝ նվիրված Հայկական հարցին, կազմված սակայն այնպես, որ ամեն մի գիրք պարունակե իր նյութի ամբողջական կամ լիակատար պատմությունը, որքան հնարավոր է: Եվ գտնելով, որ պ. Արշակ Ալյույաճյանի աշխատությունը «Տպագրության արվեստը և հայք» վերնագրով հանդիսանում է Հայկական տպագրության մասին մինչև այժմ լույս տեսած երկասիրություններից ավելի ընդարձակը և լիակատարը, մենք որոշեցինք լույս ընծայել այդ աշխատությունը իրեն «Արոր»-ի 1913 թվի Ա գիրք: Հույս ունենք, որ «Արոր»-ի ընթերցողներին և ընթերցող հայ հասարակության հանույժը կպատճառենք այս երկասիրությամբ, միջոց տալով նրանց ծանոթանալ ի մոտո հայկական տպագրության եթե ոչ ամբողջական, բայց ըստ հնարավորության լիակատար պատմության հետ»:

Աշխատության տպագրությունն սկսվում է, մոտ տասը մամուլ (152 էջ) տպագրվում, սակայն ինչ-ինչ պատճառներով կիսատ է մնում:

ԳԱԹ-ում պահվող ձեռագիրը արտագրություն է, պատրաստված տպագրության համար: Այն բաղկացած է 425 էջից և պարունակում է Ալյույաճյանի ուսումնասիրության տասնմեկ (Ա—ԺԱ) զուխները:

Այժմ դժվար է ասել, թե հեղինակը ինչ ամբողջականությամբ է ուղարկել իր աշխատու-

2 Տպված 152 էջը, Ա. Ալյույաճյանի ձեռագրի հետ միասին, պահվում է ԳԱԹ-ում: Ինչպես երևում է, «Արորի» խմբագրությունը տպագրված մասի մի օրինակ էլ ուղարկել է հեղինակին: Դրանից 80 էջ գտնվում է Ա. Ալյույաճյանի՝ Մատենադարանում պահվող ձեռագրին կից:

1 Պահվում է Ա. Ալյույաճյանի ֆոնդում, թղթ. 15, վավ. 33:

թյունը «Արորի» խմբագրությանը 1912 թ.։ Մի բան պարզ է, որ այդ օրերին աշխատության ժողովուրդը (զավառի տպարանների մասին) զբաղված չի եղել, կամ շատ վերի է եղել, երևի լիարժեք նյութի պակասի հետևանքով, քանի որ իր հարցումները Թուրքիայի հայաբնակ գավառների գործիչներին Ալաոյաճյանը ուղարկել է երկու տարի հետո միայն՝ 1914 թ. վերջերին։

Ստացված նյութերն Ալաոյաճյանը չի օգտագործել։ Մատենադարանի ձեռագրի վրա կան հետքեր, որոնք ցույց են տալիս, որ նա հետագա տարիներին ևս ինչ-որ չափով աշխատել է իր ուսումնասիրության վրա, սակայն էական լրացումներ կամ փոփոխություններ չի մտցրել։ Խոսք չկա նաև զավառական տպարանների մասին, թեև իր ձեռքի լուսկ արդեն բավականին նյութ եղել է՝ գավառներից ստացված նամակ-գրությունները։ Պատճառը հավանաբար այն է, որ նա, զբաղված լինելով իր մյուս բազմապիսի աշխատություններով, այլևս ինչպես հարկն է չի անդրադարձել այդ նյութերին։ Ահա թե ինչու գավառներից եկած նամակները իր կյանքի վերջում նա հանձնել է բանասիր Գր. Պասմաճյանին, առաջարկելով մի օր հրապարակել դրանք՝ կորստից փրկելու համար։ Պասմաճյանը կատարել է անվանի պատմաբանի ցանկությունը, սակայն մասամբ։ 10 նամակ-գրություններից նա հրատարակել է երեքը, կցելով դրանց իր ուշագրավ մեկնաբանություններն ու լրացումները³։

Պասմաճյանի հրապարակած նամակներն ըստացված են Ամասիայից, Մարզվանից ու Սեբաստիայից։ Նամակների հեղինակները տեղի գործիչներից են, գավառների հայ մշակութային կյանքին լավատեսիկ անձնավորություններ։

Ամասիայի նամակը գրել է Ամասիա-Մարզվան միացյալ թեմի առաջնորդ Գևորգ Ժ. Վ. Իրանոսյանը 1914 թ. հոկտեմբերի 14-ին։ Ինչպես հայտնում է Իրանոսյանը, Ամասիայում առաջին տպարանը հիմնադրել է Հովհ. Հովնանյանը 1909-ին⁴։ Այդտեղ տպագրվել են ինչպես

հայերեն, այնպես էլ թուրքերեն զրբեր ու պարբերականներ, այդ թվում «Ամասիա» հանդեսը (1911-ից)։ Ամասիայի մյուս տպարանը, որ կոչվել է «Փոքր Հայր», հիմնադրվել է նույն տարիներին (նամակի հեղինակը ճշգրիտ թվականը չի նշում)։ Այդ տպարանի հրատարակություններից Իրանոսյանը հիշատակում է «Աշխարհագրություն Ամասիո», «Դափնեպսակ» (նվիրված հայ գրերի դյուտի և տպագրության հոբելյանին) գրքերը ու «Ապառաժ» շաբաթաթերթը (հետագայում՝ ամսաթերթ)։

Մարզվանից ուղարկված նամակը նույնպես զբաղված է 1914-ի հոկտեմբերին։ Այն գրել է տեղի «Ներսո և Սրապյան» տպարանի վարիչ Հայկ Ֆիլիսյանը։ Մարզվանում հիմնվել է երկու տրտպարան, երկուսն էլ 1909 թ. և հայերի ձեռքով։ Դրանցից մեկը «Ներսո և Սրապյան» տպարանն է, 1914-ին վերանվանված «Անաթոլիա տարանի», որ հիմնադրել են Ղազարոս Ներսիսյանը և Հայկ Սրապյանը⁵։ Կարճ ժամանակում (1909—1914 թթ.) այդտեղ տպագրվել են 74 անուն մեծ ու փոքր գիրք մի քանի լեզուներով և «Նոր ալգ», «Հայկունի», «Ապառաժ»⁶ հայկական ու «Պոնտոս» հունական պարբերականները։ Երկրորդը «Սամվել Միածինյան, Կյուբենպերկ և Աղեքսանդր Յոզգատլյան» տպարանն է⁷, որը լույս է ընծայել մի շարք զրբեր հայերեն և թուրքերեն լեզուներով, հայկական «Բողոք» ամսաթերթն ու թուրքական «Մեղիֆուն» թերթը։

Վերջին՝ երրորդ նամակը, որ Գր. Պասմաճյանը ղեկավարել է իր գրքույկում հավելվածի ձևով, պատմում է Սեբաստիայի հայկական տպարանների մասին։ Այս նամակը Ա. Ալաոյաճյանին է ուղարկել հայ մշակույթի գործիչ, տպարանատիր և լրագրող Կ. Ա. Պարսամյանը 1914 թ. նոյեմբերի 27-ին։ Ինչպես գրում է նամակի հե-

մայրիկի թաշկինակը՝ ակնարկը), իսկ «Ամասիա» կիսամսյա հանդեսի վրա գրված է Հովնանյան-Յարտըմյան տպարան։

5 Թեոդիկը իր «Տիպ ու տառի» մեջ Ղ. Ներսիսյանի և Հ. Սրապյանի այս տպարանը սխալմամբ անվանել է «Ներսո-Արապյան», ինչպես ճիշտ նկատել է Գր. Պասմաճյանը։

6 Ամասիայի մեր հիշատակած «Ապառաժ» է, որ որոշ ժամանակ տպագրվել է Մարզվանում։

7 Գր. Պասմաճյանը այստեղ նորից ուղղում է Թեոդիկին, որն այս տպարանը երկուսի է վերածել (Միածինյան տպարան և Կյուբենպերկ տպարան), Մարզվանի տպարանների թիվը հասցնելով երեքի։ Մարզվանից ստացված նամակի հեղինակ Հ. Ֆիլիսյանը նշում է, որ «...այս անունները մեկ տպարան կներկայացնեն» (էջ 36)։

3 Գր. Պասմաճյան, Անտիպ նյութեր հայկական տպագրության պատմության վերաբերյալ, Կահիրե, 1967, 52 էջ։

4 Հովհ. Հովնանյանին հետագայում ընկերացել են և ուրիշները, ինչպես այդ մասին նշում է իր գրքույկում Գր. Պասմաճյանը։ Այսպես, Ամասիայում 1913-ին մետաբսի թաշկինակի վրա տպագրված ծրագրի տակ հիշատակված է Հովնանյան-Էվրանյան տպարանը (տե՛ս Գ. Հ. Սիմոնյան, Հուշամատյան Պոնտական Ամասիո, Վենետիկ, 1966 և «Գարուն» ամսագիր, 1967, № 1, Վ. Գրիգորյանի «Երանուհի» 16*

ղինակը, Կոռաջին տպագրական մեքենան Սեբաստիա է բերել Անդրանիկ Վարդանյանը դեռևս 1875 թ., իսկ հաջորդ՝ 1876 թ. մարտից սկսել է լույս ընծայել «Սիվաս» շաբաթաթերթը, որը տպագրվել է նախ թուրքերեն և հայերեն լեզուներով, ապա հայերենը վերածվել է հայատառ թուրքերենի, իսկ 1878-ից, անցնելով կառավարության ձեռքը, դարձել է զուտ թուրքական օրգան։ Հետագայում իր տպարանն է բացում Սեբաստիայում Ա. Վարդանյանի որդին՝ Հայկ Վարդանյանը։ Նա 1909 թ. հունվարից այդ տպարանում սկսում է լույս ընծայել «Անդրանիկ» շաբաթաթերթը, որն իր գոյությունը շարունակում է մինչև 1911 թ. հուլիսը։ Հաջորդ երկու՝ «Հողդար» (1910 թ.), իսկ դրանից հետո ավելի կատարելագործված «Կարիրա» տպարանները Սեբաստիայում բացում է ինքը՝ Կ. Ա. Պարսամյանը։ Առաջինում նա տպագրում է «Հողդար» թերթը (1910 թ. հոկտեմբերից), որին աշխատակցել են Դ. Վարուժանը, Թվկատինցին և ուրիշներ։ «Կարիրան» սկսում է գործել 1913 թ. սեպտեմբերից, որտեղ տպագրվում են մի շարք հայերեն գրքեր։

Մենք մի փոքր ավելի կանգ առնք նամակների բովանդակության վրա, ցույց տալու համար դրանց կարևորությունը հայ տպագրության պատմության համար։ Ինչպես գրում է Գր. Պասմաճյանը իր աշխատության նախաբանում, իր մոտ դեռևս մնում են «Եվդոկիայեն, Պրուսայեն, Ալեքսանդրեն, Դոնիայեն, Սամոսեն, Տրապիզոնեն և Տարսոսեն գրված նամակներ, որոնք մոտիկ ասպագային ու պատեհ առիթի մը նույնպես

հրատարակության պիտի տանք»։ Կասկած չկա, որ այս անտիպ նամակներում ևս շատ հետաքրքիր ու նոր նյութեր կլինեն հայ տպագրության պատմության վերաբերյալ։

Ինչպես «Տպագրության արվեստը և հայք» արժեքավոր ուսումնասիրության, այնպես էլ արևմտահայ գավառներից ստացված այս նամակների գոյությունը բազմապատակ պատմաբան և բանասեր Արշակ Ալպոյաճյանի գրչի ու ջանասիրության երախտիքն են։ Դրանց հրատարակությունը կարևոր ներդրում կլինի հայ մշակույթի և, մասնավորապես, մեր տպագրության պատմության հետագա ուսումնասիրության գործում։ Ներկայումս, որքան մեզ հայտնի է, նախապատրաստական աշխատանքներ են տարվում հրատարակության պատրաստելու Ա. Ալպոյաճյանի «Տպագրության արվեստը և հայք» ուսումնասիրությունը։ Դրա մի գլուխը՝ «Զբոսն ու տպարանները», բանասեր Մ. Հակոբյանը իր ծանոթագրություններով հրապարակել է «Պատմաբանասիրական հանդեսում» (1964, № 2)։ Ամբողջ ուսումնասիրությունը հրատարակելու համար անհրաժեշտ կլինի համադրել այն ամենը, ինչ գրել է հայկական տպագրության շուրջը Ա. Ալպոյաճյանը իր մյուս՝ տպագիր ու ձեռագիր աշխատություններում։ Այդ գործին կօժանդակի նաև վերևում հիշված յոթ նամակների հրապարակումը, որը, մեզ հասած տեղեկությունների համաձայն, պատրաստվում է իրականացնել Գր. Պասմաճյանը։

Մ. ԲԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ

Անվանի պատմաբան Արշակ Ալպոյաճյանը ժամանակին նշել է, որ «բուն Հնդկաստանի... երկու բազարներով՝ Քաշմիրի և Լահորի մեջ, նոր Զուլայի հիմնադրությունեն առաջ հայեր հաստատված էին»¹։

Հնդկահայ գաղութի վաստակաշատ պատմաբան Մեսրոպը Սեթյանցն իր աշխատության XV գլխում խոսելով Լահորի հայ գաղթօջախի մասին, գրում է, որ մի ժամանակ ծաղկուն այս գաղութից պահպանվել են միայն չորս տապանաքարեր²։ Հնդկահայ գաղթօջախի պատմու-

թյան վերաբերյալ իր հոդվածում Ա. Հատիտյանը ևս նշում է, որ Լահորի կենտրոնական թանգարանում պահվում են չորս տապանաքարեր՝ հայերեն արձանագրությամբ, որոնցից հնագույնը կրում է 1601 թվականը³։

1904 թ. Կալկաթայում անգլիկոս լեզվով լույս է տեսել Հնդկաստանի հնագիտական ընկերության 1902—1903 թթ. տարեկան տեղեկագիրը, որի մեջ Ժ. Ն. Վոգելն ունի մի կարճ հոդված՝ «Հայկական արձանագրություններ Բելուջիստանում»։

¹ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հայերու ցրվումը աշխարհի զանազան մասերը, հատ. Գ, Ա մաս, Կահիրե, 1961, էջ 298։

² Տե՛ս S. H. Mesrobian Jacob, Armenians in India, Calcutta, 1937, էջ 202։

³ Տե՛ս Ա. Հատիտյան, Կալկաթայի հայ մարդասիրական հեմարանի հիմնադրության հարյուրհիսունամյակի առիթով։ Համառոտ ակնարկ Հնդկահայ գաղթօջախի պատմության վրա (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1971, օգոստոս, էջ 37)։